

23. ՄԻԽՔՅ ՎԸՁԵՆ ԿԱԽԱԾԸ

Մեկ մարթըմ շատ շիվար կիլնը: ՈրթկաՀրած ը, հըմեն հեվարին կը գԱ, ուր խաց կառնը, կուտը:

Ան մեկ էօր կէրթա տԱՀշտ, կըսը. – ՎոլԱ՛, իս տուն տը շինիմ ձի խԱՀմար:

Փետ կը տա, ինչ խուղ կը փուրը, գՀուգՀումըմ ոսկը կը թըռնը տՀուս:

Ան էլ կիլնը, կը գԱ մԱտ գյեղի ռես, կըսը. – Իլի՛ յանքյ, գՀուգՀումըմ ոսկը կընդիր իմ, արը՛ էրթանքյ, խանինքյ, իս մընակ չըմ կԱնա:

Ան էլ կըսը. - ԳյընԱ՛, տՀու մընակ խան, տՀու խիղճ իս, քՀու իդԱրեն խա՛ն:

ԱնդՀուցա կըլնի, յա մԱ գյեղի գյըզիր, կըսը. – Աստծու սիրո՛ւն ըլնը, արը՛ յանքյ, գՀուգՀումըմ ոսկը խանինքյ, պերինքյ, կես՝ ձի, կես՝ քյի:

Գյըզիր կըսը. – ԳյընԱ՛, ֆըղկարա՛, խա՛ն քյի մընակ, իս չըմ ուտի քՀու մալ:

Ան էլ կիլնը, կէրթա մԱ գյեղին, մԱ որ մարթ կէրթա, կըսը. – ԳյընԱ՛, տՀու մընակ խա՛ն քյի խԱՀմար, տՀու խիղճ իս:

Ան էլ կիլնը, կը գԱ մԱ տերտեր:

Կըսը. – Տերտե՛ր, գՀուգՀումըմ ոսկը յիմ կընդի տեղըմ, արը՛ խանինքյ, կես՝ ձի, կես՝ քյի:

Տերտերն էլ կըսը. – Օրշնա՛ծ, դե ա՛րը յանքյ տուն:

Առից, իպը տուն, էսաց. – Կնի՛կ, պԱխ, փետատ տո՛ւ, յանքյ ոսկիքյ խանինքյ, պերինքյ:

էն էլ կիլնը, կէրթա, գէուգէում ոսկիքյ կը խանը, կառնը կը տա շիվար մարթէու քանակ, կը պիրը տուն:

Կըսը. – Կնի՛կ, տէուռ շինը՛:

Շիվար մարթէուն կըսը. – Նա գյետին խուրըմ փուրը:

Մարթ ըզխուր կը փուրը: Ան էլ կը պիրը, գանվանզան կը մըտուցը շիվար մարթէու փուր հինը, ըզշիվար մարթ կը սպանը, կը թանը խուր վե, խուղ կը տա վերա:

Շիվար մարթ կը կորսը: Գյեղի ռես գյըտի, թի տերտեր զան կորսըցըցիր:

Ան էլ կըսը. – Ահդ իլնը, իս հիտիվ ան իրիցուն ժամ չէրթամ, խաչ չըխանիմ իմ իրիս:

Յոթ տարը ուր տուն վե խաչ կը խանը, ժամ չէրթա: Ինչ յոթ տարը կը թումմը, մարթըմ կը գա մէտ, կըսը. – Ռե՛ս, արը՛, էրթանքյ ժամ:

Ռես կըսը. – Անկարելի՛ յը, իս չըմ իգա ժամ, իս իմ տուն հինը խաչ կը խանիմ, վըրե՞ կը գամ ժամ:

Մարթ շատ հիվը կանը, կըսը. – Արը էրթանքյ հանմա վար ժամտան տըռան, մը՛ մըտնը նիրս:

Ռես կիլնը, կէրթա խիտ, կը տեսնա՝ տերտեր ընցիր հեռճիվ գյեղանկընին, կը գան ժամ:

Մարթն էլ ռեսին կըսը. – Իրիշի՛, թանաշա՛ արա:

Տեսավ, տերտեր ինչ տը մըտներ ժամտուն, սիվ էօցըմ իրիցու վըզեն հարցըկվավ, զինքյ իտու տըռան սարդար: Տերտեր մըտավ ժամտուն: Ան մարթ, ռեսն էլ կայնած թանաշա կանին: Տեսավ՝ ժամ էլավ: Ան սիվ էօց էլմէլ հարցըկվավ, իրի, զինքյ էզար իրիցու վզի պէլէր: Զիրիցու վիզ կըքյից:

Մարթ ռեսին էսաց. - Կը տեսնա՞ս: Ան սիվ էօց օր կա, ան իրիցու միխքյն ը: Զըմտավ ժամտուն, մընաց տէուս, մեմեկ ուր միխքյ ուր վըզեն կախած ը: Տէու ժամտընեն վըրե՞ կը ռըկիս, ժամտուն օր կա, Աստծու տուն ը:

Նուր ռես թոբա արավ, իրի ուր ժամ: